Հաշվետվությունը գնահատում եմ գրավոր կամ
Հ. Սարգսյան 12. հունիս 2023թ.

ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿ վարչության
գիտական փորձաքննության կազմակերպման
բաժնի պետ Հարություն Սարգսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնում հաշվետու ժամանակահատվածի առաջին եռամսյակում՝ 2023 թվականի մարտի 10-ին հունիսի 10-ը, ծանոթացել և մասնակցել եմ բաժնի ընթացիկ աշխատանքներին՝ մրցույթի հրավերի ստուգում, հայտերի առցանց ընդունման կայքի պայմանների հստակեցում, կայքի համապատասխանությունը մրցույթի հրավերի պայմաններին, արձանագրությունների և զեկուցագրերի կազմում, այդ թվում նաև.

1. Իրականացրել եմ 2018-2020 թվականներին բազային ֆինանսավորում ունեցող կազմակերպությունների ներկայացրած տարեկան հաշվետվություններում ներկայացված աշխատակիցների նույնականացում.

   2018 թվականին՝ 7354 աշխատակից,

   2019 թվականին ՝ 5962 աշխատակից,

   2020 թվականին ՝ 7512 աշխատակից:

   Լրացրել եմ աշխատակիցների grants.scs.am կայքի անհատական կոդերը, սոցքարտերը, աշխատակիցների գիտական պաշտոնները:
2. Մշակել եմ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2023» մրցույթին ստացված թվով 9 հայտերի վերլուծությունը՝ ըստ հայտատուների տարիք, սեռ, ազգություն, ընդունող կազմակերպություն, մասնագիտական բնագավառ և այլն:
3. Կազմակերպել եմ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2023»

մրցույթի մասնագիտական փորձագիտական խորհրդի առաջին և երկրորդ նիստերը, որի ժամանակ խորհրդին տրամադրել եմ ներկայացված հայտերը, նրանց վերլուծությունը, խորհրդի հետ քննարկվել է փորձագետների և հարցազրույցի գնահատման հարցաշարը:

Գիտական փորձաքննության
կազմակերպման բաժնի փորձագետ Մարինա Տիմոտինա

12 հունիս 2023 թ.